ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ

ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՏԵՂԵԿԱՆՔ

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ

«ԱՐՏԱԿԱՐԳ 2020 ԹՎԱԿԱՆԸ»

(ՁԼՄ մշտադիտարկման արդյունքների ամփոփում)

Վանաձոր 2021

Norwegian Helsinki Committee

Տեղեկանքը պատրաստվել է «Ոստիկանության հետ հարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Տեղեկանքում հնչած կարծիքները ՀՔԱ Վանաձորի գրասենյակինն են և հնարավոր է չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Կազմող՝ Սառա Ղազարյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԶԼՄ-ների կանխարգելիչ դերը 4

Մեթոդաբանություն 5

ԱՄՓՈՓԱԳԻՐ (ԱՐՏԱԿԱՐԳ 2020-Ը) 5

ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ 9

1. 2020 թ. հավաքների ընթացքում կամ դրանց մասնակցելու հետևանքով ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած դեպքերի ամփոփում 9

2. Հավաքների ազատությունը և արտակարգ դրությունը 9

(2020թ. մարտի 16-սեպտեմբերի 11) 9

Կապանի իրադարձությունները (2020 թ. մայիսի 24-27) 11

«Ամուլսարը սար է» (2020թ. օգոստոս) 13

3. Հավաքների ազատությունը և ռազմական դրությունը 14

(2020 թ. սեպտեմբերի 27- դեկտեմբերի 31) 14

Քաղաքացիական հագուստով անձինք, տարբերանշան չունեցող մեքենաներ 17

«Չինական համազգեստ» 17

Լրագրողներ 18

4. Ոստիկանություն vs դատական ատյաններ 18

5. Հակաժողովրդավարական գործողությունները և ոստիկանության անգործությունը 19

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԴԵՊՔԵՐ 21

1. 2020 թ.-ին ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած անհատական բնույթի դեպքերի ամփոփում 21

2. Անհատական դեպքերը արտակարգ դրության ժամանակ 21

(2020 թ. մարտի 16-սեպտեմբերի 11) 21

3. Անհատական դեպքերը ռազմական դրության ժամանակ 23

(2020 թ. սեպտեմբերի 27-դեկտեմբերի 31) 23

4. Բռնության և խոշտանգման դեպքերի արտացոլումը ՀՔԾ պաշտոնական կայքէջում (2015-2020 թթ.) 24

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ 26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020 թվականը Հայաստանի Հանրապետության համար լի էր մարտահրավերներով, իսկ ոստիկանության ծառայողների գործողություններն այդ իրավիճակում էլ ավելի հակասական, անհետևողական, անկանխատեսելի և անհամաչափ:

Թեև 2020 թ. ապրիլի 23-ին ՀՀ կառավարության թիվ 638-Լ որոշմամբ հաստատվեց ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունն ու 2020-2022 թթ. գործողությունների ծրագիրը, որով, ի թիվս այլնի, նախատեսվում է ոստիկանության ծառայողի բարեվարքության, կրթության զարգացում և թափանցիկության ու հաշվետվողականության աճ, հաշվետու տարում ոստիկանության գործողությունների մշտադիտարկումը ցույց է տալիս ոստիկանության ծառայողի բարեվարքության բացակայություն, ոստիկանության աշխատանքի թափանցիկության և հաշվետվողականության նվազում: Ոստիկանության ծառայողների գործողությունները, որպես կանոն, համաչափ ու իրավաչափ չէին ճգնաժամային իրավիճակներում:

Սույն տեղեկանքն ամփոփում է 2020 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ-ում ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը: «Արտակարգ 2020 թ.»-ը մեկ անգամ ևս հաստատեց ԶԼՄ հրապարակումների կարևորությունը և նշանակությունը՝ ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի լուսաբանման և հանրային վերահսկողության ապահովման հարցում:

ԶԼՄ հրապարակումների մշտադիտարկումը ոստիկանության գործողությունները գնահատելու արդյունավետ գործիքներից է: Հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը, ուղիղ եթերների հնարավորությունը՝ լրագրողների աշխատանքն ուսումնասիրության լայն դաշտ է ստեղծում: Դեպքի վայրից տեղեկատվության և տեսագրությունների հասանելիությունը լրատվամիջոցները դարձնում են ուսումնասիրության սկզբնաղբյուր՝ ապահովելով իրավիճակը հնարավորինս օբյեկտիվորեն գնահատելու հնարավորություն: Այս դիտարկումը, իհարկե, մեծապես վերաբերում է հանրային միջոցառումներին: Սնհատական բնույթի դեպքերով, համադրելով վերջին երկու տարվա Հատուկ քննչական ծառայության և ԶԼՄ հրապարակումները, ինչպես նաև ՀՔԱՎ ստացած ահազագերն ու դիմումները՝ կարող ենք փաստել, որ մասնավորապես ոստիկանության բաժանմունքներում մարդու իրավունքների խախտման դեպքերը շարունակվում են, սակայն պատասխանատու մարմնի՝ այդ դեպքերը կանխելու, իսկ տեղի ունենալու դեպքում մեղավորներին պատասխանատվության ենթարկելու գործողությունները կամ բացակայում են կամ դրանք պատշաճ չեն ներկայացվում հանրությանը: Այսինքն ոստիկանության բաժանմունքների ներսում տեղի ունեցող իրադարձությունները էլ ավելի անհասանելի են դարձել հանրությանը: Նշենք, որ անհատական բնույթի դեպքերի դիտարկումը պակաս կարևոր չէ ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների հնարավոր խախտումները զսպելու և կանխարգելելու տեսանկյունից:

ԶԼՄ-ների կանխարգելիչ դերը

2020 թվականի ընթացքում պարբերաբար արձանագրվել են դեպքեր, երբ ոստիկանությունը հավաստիացրել է ոստիկանության ծառայողի կողմից ոչ իրավաչափ գործողությունների դեպքերով ծառայողական քննություն նշանակելու մասին: Հաշվի առնելով ԶԼՄ-ների դերը ոստիկանության կողմից քաղաքացիների իրավունքների խախտման դեպքերի կանխման համատեքստում՝ կարևոր

նշանակություն ունի նաև ոստիկանության աշխատակիցների նկատմամբ ծառայողական քննությունների ընթացքի և արդյունքների լուսաբանումը՝ հատկապես ոստիկանության բաժանմունքներում ֆիզիկական բռնության, խոշտանգման ու հոգեբանական ճնշման, և առհասարակ մարդու իրավունքների խախտման դեպքերով: ԶԼՄ-ներով լուսաբանումները խթանում են Ոստիկանության հաշվետվողականությունը և թափանցիկությունը՝ ըստ այդմ նպաստելով մարդու իրավունքների խախտումների կանխարգելմանն ու նվազմանը:

Մեթոդաբանություն

Ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների իրավունքների խախտման դեպքերը հավաքագրելու նպատակով մշտադիտարկվել են 15 առցանց լրատվամիջոց, ՀՀ ոստիկանության և հատուկ քննչական ծառայության պաշտոնական կայքերը (ՀՔԾ)[1]:

Դեպքերն առանձնացվել և վերլուծվել են լրատվամիջոցների տարածած տեղեկատվության հիման վրա, որի հավաստիության համար պատասխանատվություն են կրում տարածող լրատվամիջոցները:

Արձանագրված դեպքերը բաժանվել են երկու պայմանական խմբի՝ հավաքների ժամանակ կամ դրանց մասնակցելու հետևանքով տեղի ունեցած դեպքեր և անհատական բնույթի դեպքեր: Հավաքների մեջ ներառվել են բոլոր հանրային միջոցառումները՝ ցույց, նստացույց, երթ և այլն:

Տեղեկանքում անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտում են համարվել ոչ միայն ապօրինի բերման ենթարկելու դեպքերը, այլև բոլոր այն դեպքերը, երբ անձը բերման է ենթարկվել ոստիկանություն պայմանականորեն օրենքի տառին համապատասխան, սակայն պահվել է ոստիկանությունում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված 3 ժամից ավել (հոդված 131[1]), ինչպես նաև բերման ենթարկելու փորձերը:

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտումները ներկայացված և դասակարգված են՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայով ամրագրված մարդու իրավունքների ցանկը, ինչպես նաև առանձին մասնագիտական խմբերի (գլխավորապես լրագրողների) գործունեության խոչընդոտման բովանդակությունը հնարավորինս հստակ փոխանցելու և տեսանելի դարձնելու նպատակով:

Մարդու խախտված իրավունքների վերաբերյալ հաշվարկում ներառված են ինչպես առանձին այդ իրավունքի խախտման դեպքերը, այնպես էլ այլ իրավունքների խախտման հետ զուգորդված դեպքերը:

Սույն մեթոդաբանությունն ապացուցեց իր արդյունավետությունը նաև արտակարգ և ռազմական դրությունների պայմաններում:

ԱՄՓՈՓԱԳԻՐ (ԱՐՏԱԿԱՐԳ 2020-Ը)

Մշտադիտարկման արդյունքները փաստում են, որ ոստիկանությունը պատրաստ չէր դիմակայելու ճգնաժամային իրավիճակներում առաջացած խնդիրներին: Ոստիկանության ծառայողները չցուցաբերեցին անհրաժեշտ և բավարար մասնագիտական հմտություններ,

[1] Մշտադիտարկված լրատվամիջոցներն են՝ www.aravot.am, www.armlur.am, www.galatv.am, www.azatutyun.am, www.1in.am, www.168.am, www.armtimes.am, www.hraparak.am, www.epress.am, www.lragir.am, www.ilur.am, www.news.am, www.hetq.am, www.a1plus.am, www.factor.am, www.police.am, www.ccc.am

հետևողականություն և կամք՝ գործելու բացառապես օրենքի պահանջներին համապատասխան, իրենց լիազորություններին և գործառույթներին համահունչ, կանխելու հանցավոր գործողությունները, պատժելու մեղավորներին՝ միևնույն ժամանակ չխախտելով ՀՀ քաղաքացիների իրավունքները և չխոչընդոտելով դրանց իրացմանը:

2020 թ. առաջին եռամսյակում կազմակերպված հավաքներն ու բողոքի ակցիաներն անցան առանց ոստիկանության միջամտության, ինչպես օրինակ՝ անասունների մորթը սպանդանոցում իրականացնելու դեմ բողոքող անասնապահների, խաղաղ պայմաններում բանակում մահացած զինվորների ծնողների ակցիաները:

Կորոնավիրուսի համավարակի (COVID-19) կանխման նպատակով 2020թ. մարտի 16-ից հայտարարված արտակարգ դրության ռեժիմով, այնուհետև 2020թ. սեպտեմբերի 27-ից Արցախի նկատմամբ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով հայտարարված ռազմական դրությամբ սահմանափակվեցին մարդու մի շարք իրավունքներ: Նշված երկու որոշումների կատարման վերահսկողության իրականացման գործում էական դերակատարություն ունեին իրավապահ մարմինները, հատկապես՝ ոստիկանությունը: Արտակարգ ռեժիմով և ռազմական դրությամբ արգելվեցին **հավաքների և գործադուլների** կազմակերպումը, անցկացումը և դրանց մասնակցելը: Այնուամենայնիվ արձանագրվեցին քաղաքացիների կողմից բողոքի ակցիաների կազմակերպում, որոնց ժամանակ իրավապահ մարմինների արձագանքը միատեսակ, կանխատեսելի, իրավաչափ և համարժեք չէր: Ոստիկանության կողմից միջամտության ոչ մի գործողություն տեղի չի ունեցել,օրինակ, մեծաթիվ մասնակիցներով ակցիաներին, որոշ դեպքերում պարզապես հորդորվել է պահպանել սոցիալական հեռավորությունը, այլ դեպքերում՝ մասնակիցները կամայական բերման են ենթարկվել (երբեմն նույնիսկ մինչև բողոքի ակցիայի մեկնարկը): Ավելին, թեև արգելված էին հավաքներն ու գործադուլները, 20 և ավելի անձանց մասնակցությամբ հանրային միջոցառումները, բերման են ենթարկել նաև միանձնյա ակցիա իրականացնողներին՝ այն դեպքում, երբ օրենքի իմաստով հավաքի պարտադիր տարր է **երկու կամ ավելի անձանց** մասնակցությունը: Ոստիկանությունը շարունակել է նաև

- ✓ կամայական բերման ենթարկել և վարչական արձանագրություններ կազմել (օրինակ՝ Կապանի դեպքերը 2020 թ. մայիսին),
- ✓ ուժ կիրառել ակտիվիստների նկատմամբ, մեկ դեպքում արգելել, մեկ այլ դեպքում թույլատրել նույնաբովանդակ ակցիները (օրինակ՝ Ամուլսարի շահագործամ դեմ բողոքող ակտիվիստների նկատմամբ գործողությունները 2020 թ. օգոստոսին),
- ✓ ցուցաբերել անգործություն և անհետևողականություն, մասնավորապես՝ ատելության և սպառնալիքի խոսքի, բռնության գործողությունների նկատմամբ,
- ✓ ներգրավել քաղաքացիական հագուստով, իսկ հետպատերազմյան Հայաստանում նաև **սնազգեստ ու դիմակավորված անձանց,** այն դեպքում, երբ **հանրային վերահսկողություն իրականացնող ոստիկանին նույնականացնելու հնարավորությունը օրենքի պահանջ է**:

2018 թ. հեղափոխությունից հետո հանրային ակտիվությունն ավելի մեծացավ: Միաժամանակ ի հայտ եկան մի շարք նոր նախաձեռնություններ և շարժումներ, որոնք դիրքավորվում են հանրային դաշտում որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտներ: Նրանց օրակարգը, սակայն, ոչ թե մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների պաշտպանությունն ու խթանումն է, այլ հակառակը՝ պայքարը Հայաստանում մարդու իրավունքների և ժողովրդավարության արժեքների դեմ, որոնք ուղեկցվում են ատելության, բռնության և ֆիզիկական սպառնալիքներ հրահրող կոչերով և

արտահայտություններով: Հայաստանում մարդու իրավունքների և ժողովրդավարական զարգացումների խթանման գործընթացը խոչընդոտող նման նախաձեռնությունների և շարժումների գործողությունները ոստիկանության կողմից ոչ միայն չեն կանխվում, այլ ավելին՝ ապահովվում է ակցիաների անխափան իրականացումը, մինչդեռ նման գործողությունները չեն կարող պաշտպանված լինել ժողովրդավարական և իրավական պետությունում: Նման վերաբերմունքը մեկ անգամ ևս փաստում է, որ իրավապահ համակարգն ի զորու չէ ճիշտ գնահատել իրողությունները և պատշաճ արձագանքել ժողովրդավարական և իրավական պետության սկզբունքներին սպառնացող նոր մարտահրավերներին:

Համարժեք չէր նաև անհատական բնույթի դեպքերով ոստիկանության վարքագիծը: Համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված գործողությունների ժամանակ ոստիկանության ծառայողների ընտրողական մոտեցումից տուժում էին առանձին քաղաքացիներ, մինչդեռ բարձրաստիճան պաշտոնյաների, մասնավորապես՝ ԱԺ պատգամավորների կողմից համավարակի կանոնների հրապարակային խախտման դեպքերին ոստիկանությունը համարժեք չէր արձագանքում՝ ցուցաբերելով ակնհայտ անգործություն և տարբերակված, խտրական վերաբերմունք: Առանձին դեպքերում ոստիկանությունն անտեսելով մարդկային կուտակումները՝ տուգանում էր միայնակ տեղաշարժվողներին՝ դիմակի բացակայության պատճառով, իսկ մի դեպքում անգամ բռնություն է կիրառել քաղաքացու նկատմամբ: Ավելին, ոստիկանության ծառայողները հաճախ իրենք չէին պահպանում այն կանոնները, որոնք ցուցված էին համավարակի կանխարգելման համար՝ վերահսկողությունն իրականացնելով խմբերով, առանց դիմակի:

Ամփոփված թվային տվյալներն իրենց հերթին վկայում են, որ հետհեղափոխական Հայաստանում ոստիկանության ծառայողների կողմից ՀՀ քաղաքացիների իրավունքների խախտման դեպքերը կրում են շարունակական բնույթ: Դատելով այդ տվյալներից՝ կարող ենք փաստել, որ 2019 թ.-ին արձանագրված մարդու իրավունքների խախտման դեպքերի նվազումը (2019 թ.՝ 90 դեպք, 2020 թ.՝ 192 դեպք) պայմանավորված է ակցիաների ոչ մեծ թվով և դրանց բովանդակությամբ: Նախորդ տարի ևս արձանագրվել են բռնության և բերման ենթարկելու անհիմն գործողություններ իշխանության դեմ բողոքների և Ամուլսարի շահագործման դեմ ակցիաների մասնակիցների նկատմամբ (տե՛ս *Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ* ՀՔԱՎ տեղեկանքը):

2020 թ. ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի կրկնակի աճ է գրանցվել նախորդ տարվա համեմատ: Ավելին, հետհեղափոխական երկրորդ տարում ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի թիվը գերազանցել է հեղափոխական տարում՝ մեծամասամբ հեղափոխությամբ պայմանավորված խախտման դեպքերի թվին: Ընդ որում, 2020 թ. առաջին կիսամյակում մարդու իրավունքների խախտման անհատական բնույթի դեպքերը կազմել են ընդհանուր թվի 60.5%-ը, իսկ երկրորդ կիսամյակում գերակշռում էին հավաքների ընթացքում խախտման դեպքերը՝ 73%:

Բանն այն է, որ հաշվետու տարվա առաջին կիսամյակում հանրապետությունում համավարակով պայմանավորված ոստիկանության ծառայողներին էր վերապահված մասնավորապես ազատ տեղաշարժի սահմանափակումները և անհատական պաշտպանության միջոցներ կրելու պահանջը վերահսկելու գործառույթը: Նրանք, ունենալով իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու իրավական գործիքակազմ, այնուամենայնիվ դիմում էին ոչ

իրավաչափ գործողությունների, բռնության, ներգրավում էին քաղաքացիական հագուստով անձանց՝ քաղաքացիներին պահանջներ ներկայացնելու, ընդհուպ բերման ենթարկելու գործողություններում, այն դեպքում, երբ հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս ոստիկանության ծառայողների՝ սահմանված ձևի համազգեստ կրելը, ոստիկանության ծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորությունն օրենքի պահանջեր են: Ոստիկանության ծառայողները դրսևորում էին ընտրողական մոտեցում իրավախախտների նկատմամբ՝ որոշ դեպքերում ընդհուպ անտեսելով ակնհայտ իրավախախտումները:

Երկրորդ կիսամյակում՝ հատկապես հետպատերազմյան ժամանակահատվածում, լայն թափ ստացան իշխանության գործողությունների դեմ բողոքի ակցիաները, որոնց իրականացման ընթացքում ոստիկանության աշխատակիցները հաճախ էին դիմում անհամաչափ ուժի կիրառմանը, բողոքի ակցիաների մասնակիցներին ազատությունից զրկելու ոչ իրավաչափ գործողությունների՝ կամայականորեն բերման ենթարկելով նրանց, գենդերային հիմքով ընտրողական մոտեցում էին ցուցաբերում՝ հրահանգելով բերման չենթարկել աղջիկներին: Արձանագրվել են ոստիկանական գործողություններին դիմակավորված անձանց ներգրավման դեպքեր:

Խնդրահարույց է նաև ՀՔԾ գործունեության թափանցիկության հարցը: Հետհեղափոխական տարիներին արձանագրվել է ոստիկանության ծառայողների ապօրինի գործողությունների փաստով քննություն իրականացնող այս մարմնի կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ հրապարակումների թվի նվազում: 2020 թ. ընթացքում ՀՔԾ կայքի «Լուրեր» բաժնում տեղադրվել է **61 հրապարակում**, որոնցից միայն մեկն էր վերաբերում ոստիկանության ծառայողների կողմից խոշտանգման ենթադրյալ դեպքին, այն դեպքում, երբ միայն **2 ամսվա ընթացքում ոստիկանության աշխատակիցների կողմից արժանապատվությունը նվաստացնելու, ֆիզիկական և հոգեբանական բռնությունների, խոշտանգման դեպքերով ՀՔԱՎ են դիմել 8 քաղաքացիներ**:

Համադրելով և ամփոփելով մինչև հեղափոխությունը և հեղափոխությունից հետո Ոստիկանության գործողությունները՝ կարող ենք փաստել, որ բաժանմունքներում շարունակվում է արձանագրվել քաղաքացիների նկատմամբ ուժի կիրառման և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի պրակտիկան (տե՛ս *Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ* ՀՔԱՎ տեղեկանքներն առ 2016 թ., 2017 թ., 2018 թ., 2019 թ.):

Այսպիսով, իրավապահ համակարգում բարեփոխումների չիրականացված լինելը, հատկապես ճգնաժամային իրավիճակներում, առավել ցայտուն ցույց տվեց տարիներ շարունակ ոստիկանության համակարգում արձանագրված խնդիրների չլուծված լինելու խիստ բացասական ազդեցությունը, որը շարունակում է հանգեցնել մարդու իրավունքների կոպիտ խախտումների:

ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

«...ներքին անվտանգություն ասելով մենք չենք հասկացել երբեք ու երբևէ չենք հասկանալու քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակում, ընդդիմության գործունեության սահմանափակում և այդպես շարունակ...»

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյան,
26.01.2019 թ.

2019 թ. սկզբին ՀՀ վարչապետի կողմից հնչեցված այս պարտավորությունը լուրջ փորձության ենթարկվեց 2020 թ. ընթացքում՝ արտակարգ և ռազմական դրությունների պայմաններում, որոնք ապահովող իրավական նորմերով արդեն իսկ անհամաչափ սահմանափակվեցին մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

1. 2020 թ. հավաքների ընթացքում կամ դրանց մասնակցելու հետևանքով ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած դեպքերի ամփոփում

2020 թ. կազմակերպված մոտ 150 հավաքների ընթացքում արձանագրվել է ոստիկանության գործողությունների հետևանքով մարդու իրավունքների խախտման 111 դեպք: Առավել մեծ թվով խախտվել է խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը՝ 101 դեպք (91%): Այս իրավունքի հետ զուգորդված խախտվել է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը՝ 81 դեպք (73%), և ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը՝ 52 դեպք (46.8%): Խախտվել են նաև առողջության, ազատ տեղաշարժվելու, արդար դատաքննության, իրավաբանական օգնություն ստանալու, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, գույքի անձեռնմխելիության, խոսքի ազատության իրավունքները, ինչպես նաև խոչընդոտվել է 8 լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը:

111 դեպքերից 94-ը գրանցվել է Երևանում, 6-ը՝ Վայոց Ձորի մարզում, 4-ը՝ Արարատի մարզում, 3-ը՝ Սյունիքի մարզում, մեկական դեպք՝ Արմավիրի, Շիրակի, Տավուշի մարզերում: Մեկ դեպքի կատարման վայրի մասին հրապարակման մեջ հստակ անդրադարձ չկա:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված դեպքերը՝ ըստ խախտված իրավունքի և ոստիկանության գործողության տեսակի (անգործության), առավել մանրամասն հասանելի են այս հղմամբ:

2. Հավաքների ազատությունը և արտակարգ դրությունը

(2020թ. մարտի 16-սեպտեմբերի 11)

2020թ. մարտի 16-ին Հայաստանում սահմանվեց արտակարգ դրություն և, ի թիվս այլնի, սահմանափակվեցին հավաքների ազատության, ազատ տեղաշարժվելու իրավունքները: Արտակարգ

դրության ընթացքում, այնուամենայնիվ, կազմակերպվել են հավաքներ, որոնց ընթացքում ոստիկանության վարքագիծը միատեսակ չէր, գործողությունները՝ անհամաչափ։ Օրինակ՝ ապրիլի 14-ին Երևանի հանրային տրանսպորտի շուրջ 250 վարորդներ բողոքի ցույց էին կազմակերպել՝ պնդելով, որ հանրային տրանսպորտի գործունեության արգելքով պայմանավորված զրկվել են եկամտի միակ աղբյուրից, չեն ներգրավվել աջակցման որևէ ծրագրում և պահանջելով լուծում տալ հարցին։ Ապրիլի 16-ին Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) ազգությամբ հայ քաղաքացիները, ինչպես նաև ՌԴ մշտապես արտագնա աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիները բողոքի ակցիա էին կազմակերպել Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) հայաստանյան գրասենյակի մոտ՝ խնդրելով ապահովել իրենց վերադարձը ՌԴ անձնական մեքենաներով։ Նույն պահանջով մայիսի 11-ին ակցիա էր տեղի ունեցել Հայաստանում ՌԴ դեսպանատան առջև։ Այս և մի շարք այլ ակցիաներն ընթացել են առանց ոստիկանության միջամտության և սահմանափակումների, մինչդեռ ոստիկանությունն այլ վարքագիծ է դրսևորել, օրինակ՝ ապրիլի 26-ին կառավարության դիմաց տեղի ունեցած գազի և էլեկտրաէներգիայի վարձավճարները մուծելու պահանջի դեմ բողոքի ակցիայի դեպքում։ Մինչև տասը մասնակիցներով և մոտ 15 րոպե տևած ակցիայի ընթացքում ոստիկանության ծառայողը մի քանի անգամ մոտեցել է հավաքի կազմակերպչին՝ հորդորելով դադարեցնել ակցիան, քանի որ դա արգելված է պարետի որոշմամբ, իսկ արդեն ապրիլի 27-ին նույն խնդրով կառավարության շենքի մոտ միայնակ ակցիա իրականացնող ՀՀ քաղաքացի Միքայել Մարգարյանին ոստիկանները, բռնության կիրառմամբ, ձեռնաշղթա են հագցրել և տարել ոստիկանության բաժանմունք։ Բռնության կիրառմամբ ձեռնաշղթա են հագցրել և բերման են ենթարկել նաև քաղաքացու անչափահաս որդուն։ Վերջինս ակցիային չի մասնակցել, սակայն տեսնելով հոր նկատմամբ ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունները, դուրս է եկել մեքենայից, ինչից հետո բերման է ենթարկվել։ Հաջորդ օրը՝ ապրիլի 28-ին, կառավարության շենքի դիմացից Ոստիկանության կենտրոնական բաժին բերման է ենթարկվել SOS նախաձեռնության անդամ, ակտիվիստ Հայկ Բարսեղյանը, որը եկել էր կառավարության մոտ, «որպեսզի քայլեր աջ-ձախ»։

*Հատկանշական է, որ իրավական կարգավորումների տեսանկյունից նույն պայմաններում ոստիկանության ծառայողները որևէ գործողություն չեն նախաձեռնել ՄԱԿ գրասենյակի և ՌԴ դեսպանատան մոտ ակցիաների ժամանակ, ի տարբերություն ապրիլի 26-ին և 27-ին կառավարության մոտ միանձնյա ակցիաների, այն դեպքում, երբ համաձայն «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի՝ հավաքը «**երկու կամ ավելի անձանց** խաղաղ և առանց զենքի ժամանակավոր ներկայությունն է որևէ վայրում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ ընդհանուր կարծիք ձևավորելու կամ արտահայտելու մտադրությամբ»։ Այսինքն Միքայել Մարգարյանի և Հայկ Բարսեղյանի ակցիան հավաք չէր ըստ օրենքի և հետևաբար նրանք չէին կարող համարվել արտակարգ դրությամբ պայմանավորված հավաքների կազմակերպման պահանջի խախտողներ։*

Հունիսի 12-ին Ազգային ժողովի մոտից բերման են ենթարկվել նաև միանձնյա ակցիա իրականացնող Ռուբեն Մելիքյանը և նս երեք իրավաբան՝ հավաքների արգելքի որոշումը խախտելու համար, մինչդեռ երեք օր անց՝ հունիսի 15-ին, Ռուբեն Մելիքյանի կողմից Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության գրասենյակի մոտ իրականացվող ակցիան ոստիկանության կողմից չգնահատվեց որպես խախտում։

Վերոնշյալ դեպքերը ոչ միատեսակ և իրավական առումով չհիմնավորված մոտեցման մի քանի օրինակներ են։

Ոստիկանության ծառայողների կողմից նաև սահմանափակվել է հավաքներին մասնակցելու իրավունքը: Մասնավորապես հունիսի 14-ին, երբ Բարգավաճ Հայաստան կուսակցության (ԲՀԿ) ղեկավար Գագիկ Ծառուկյանին հրավիրել էին Ազգային անվտանգության ծառայություն (ԱԱԾ), իսկ նրա կողմնակիցները բողոքի ակցիա էին իրականացնում ԱԱԾ շենքի մոտ, ինչպես նաև ԲՀԿ հունիսի 16-ին կազմակերպված բողոքի ակցիայի ժամանակ փակ էին մայրաքաղաք մտնող միջքաղաքային ճանապարհները. ոստիկանության ծառայողները կանգնեցնում էին երթուղայիններն ու ավտոբուսները և թույլ չէին տալիս մտնել Երևան: Վերահսկվում էին նաև ծայրամասերից դեպի կենտրոն տանող ճանապարհները:

Ոստիկանության ծառայողների գործողություններից տուժել են նաև լրագրողները: Մասնավորապես հունիսի 16-ին ԲՀԿ կողմնակիցների՝ ԱԱԾ շենքի մոտ կազմակերպված ակցիայի ժամանակ ոստիկանական գործողությունների հետևանքով տուժել է առնվազն 5 լրագրող: Մասնավորապես՝ վնասվածքներ են ստացել «News.am» լրատվական կայքի թղթակից Լիանա Սարգսյանը, «Tert.am»-ի լրագրող Անի Գևորգյանը, «Yerkir.am»-ի թղթակից Տաթևիկ Կոստանդյանը, «Կենտրոն» հեռուստաընկերության լրագրող Արթուր Հակոբյանը, «MegaNews.am» կայքի խմբագիր Մարգարիտա Դավթյանը:

Հավաքների ժամանակ արձանագրվել են նաև քաղաքացիական հագուստով անձանց կողմից մասնակիցներին բերման ենթարկելու, ուժ կիրառելու դեպքեր (տեսագրության 5:12 րոպեից):

Հիշեցնենք, որ հասարակական կարգը վերահսկող ոստիկանության ծառայողի կողմից սահմանված ձևի համազգեստ և տարբերակման նշան կրելն օրենքի պահանջ է (ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին», հոդված 12):

Ոստիկանության ծառայողների կողմից ոչ միատեսակ մոտեցում է եղել նաև պարետի՝ անվտանգության միջոցներ կրելու և սոցիալական հեռավորություն պահպանելու կանոնների վերահսկման հարցում: Մասնավորապես օգոստոսի 12-ին ոստիկանության ծառայողները պարետի որոշումը խախտելու, այն է՝ հացադուլի ընթացքում լրագրողների հետ զրուցելիս դիմակ չկրելու համար արձանագրություն են կազմել բռնցքամարտի աշխարհի չեմպիոն Իսրայել Հակոբկոխյանի նկատմամբ: Միևնույն ժամանակ, նույն օրը բողոքի ակցիա իրականացնող ռուսաստանաբնակ ՀՀ քաղաքացիներից մեկի՝ լրագրողների հետ զրուցելիս դիմակ չկրելը ոստիկանության ծառայողները չգնահատեցին որպես պարետի որոշման խախտում:

Ավելին, սեպտեմբերի 4-ին ոստիկանության ծառայողները «Ռեֆորմիստներ» կուսակցության անդամների երթի ժամանակ ուղեկցում էին մասնակիցներին, սակայն սոցիալական հեռավորություն պահպանելու պահանջի մասին որևէ հիշեցում չի արվել: Նույն վերաբերմունքն է դրսևորվել նաև, օրինակ՝ սեպտեմբերի 10-ին, երբ քաղաքացիները ցույց էին անում՝ փակելով Վարդենիսի մուտքն ու ելքը: Ցուցարարները սոցիալական հեռավորություն չէին պահպանում, որոշները՝ առանց դիմակ էին, սակայն ոստիկանությունը որևէ մեկին կանոնները պահպանելու կոչով չի դիմել:

Կապանի իրադարձությունները (2020 թ. մայիսի 24-27)

2020 թ. մայիսի 24-ի լուսադեմին դիմակավորված և զինված ոստիկանները ձերբակալել էին Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանի մերձավոր շրջապատից 4 անձի՝ նրանց տեղափոխելով ոստիկանության Կապանի բաժին: Ձերբակալությունները լարված իրավիճակ ստեղծեցին Կապան քաղաքում: Ոստիկանության Կապանի բաժնի շենքի դիմաց հավաքվել էին

բազմաթիվ քաղաքացիներ՝ պահանջելով ազատ արձակել բերման ենթարկվածներին: Ըստ շենքի առջև հավաքված հարազատների տեղեկությունների՝ ձերբակալվածներին ոստիկանությունում ծեծի են ենթարկել: Ձերբակալվածների նկատմամբ բռնության մասին է հայտնել նաև նրանց տեսակցած Քաջարանի քաղաքապետ Մանվել Փարամազյանը:

Հատկանշական է, որ համաձայն news.am կայքի, ոստիկանությունը հերքել է բռնություն գործադրելու մասին տեղեկությունները, սակայն նույն օրը ոստիկանության ֆեյսբուքյան էջում տեղադրվել է Կապանի բաժնում տեղի ունեցածի վերաբերյալ ծառայողական քննություն սկսելու մասին տեղեկությունը: Նշենք, որ մայիսի 25-ի դրությամբ Կապանի դեպքերի կամ ծառայողական քննություն սկսելու վերաբերյալ որևէ տեղեկություն չի տեղադրվել ոստիկանության պաշտոնական կայքում:

Ոստիկանության ծառայողները նաև թույլ չեն տվել ձերբակալվածների փաստաբաններին տեսակցել իրենց վստահորդներին, ինչի մասին փաստաբաններն ահազանգել են Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ:

Մայիսի 24-ին պարզվել է, որ ձերբակալվածներից մեկը սխալմամբ է տարվել բաժանմունք, և նրան կեսօրից հետո ազատ են արձակել: Քաղաքացին սխալ ձերբակալվելուց բացի բաժանմունքում ենթարկվել է նաև բռնության: Ավելին, ոստիկանության ծառայողները փորձել են համոզել սխալմամբ ձերբակալված և բռնության ենթարկված քաղաքացու հարազատներին, որպեսզի ոստիկանությունից հետ վերցնեն բռնության փաստով ներկայացված իրենց բողոքը:

Այսինքն, խախտվել է անձի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, անձը ենթարկվել է ֆիզիկական բռնության, և ոստիկանության ծառայողները փորձել են կոծկել բռնության փաստը:

Աղբյուրը՝ www.168.am

Ինչ վերաբերում է ձերբակալվածներին ազատ արձակելու պահանջով ոստիկանության Կապանի բաժնի շենքի դիմաց կազմակերպված բողոքի ակցիային, ապա մայիսի 27-ի դրությամբ Կապանում տեղի ունեցած ակցիայի մասնակիցներից 20-ի նկատմամբ վարչական իրավախախտումների հիմքով արձանագրություն է կազմվել:

Հաշվի առնելով, որ բողոքի ակցիայի մասնակիցների թիվը 20-ից ավել էր, անհասկանալի է, թե ինչ սկզբունքով է վարչական իրավախախտման մասին արձանագրություն կազմվել հենց այդ 20 անձի նկատմամբ: Արդյո՞ք ոստիկանությունն ուսումնասիրել և գնահատել է, որ այդ 20 անձն են խախտում կատարել, ինչ խախտում են կատարել, թե արձանագրությունները կազմվել են պատահականության սկզբունքով:

«Ամուլսարը սար է» (2020թ. օգոստոս)

Հաշվետու տարվա օգոստոս ամսին Ամուլսարի հանքի շահագործման դեմ բողոքի ակցիաներ էին կազմակերպվել ինչպես Ջերմուկում, այնպես էլ Երևանում: Ոստիկանության ծառայողների գործողություններն այս դեպքում ևս ոչ միատեսակ և ոչ իրավաչափ էին: Մասնավորապես օգոստոսի 4-ին ոստիկանները փակել էին դեպի Ամուլսար տանող ճանապարհը և թույլ չէին տալիս մեքենաներին անցնել՝ խոչընդոտելով ազատ տեղաշարժվելու իրավունքը. այդ պահին մեքենաներում գտնվող անձինք փաստացի ակցիա չէին իրականացնում:

Նշենք, որ առհասարակ հավաքների և բողոքի լայնածավալ ակցիաների ժամանակ ոստիկանության ծառայողների կողմից դեպի ակցիայի վայր ճանապարհների փակումը չի համապատասխանում օրենքի որևէ պահանջին, իրավաչափ չի կարող համարվել, և հանդիսանում է հավաքների ազատության իրավունքի կոպիտ խախտում: Բացի դրանից՝ այդպիսով խոչընդոտվում է նաև այն անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքը, որոնք այդ պահին օգտվում են այդ ճանապարհից: Ավելին, ոստիկանությունը նույն հետևողականությամբ չի վերաբերում իր կանխարգելիչ գործառույթին, օրինակ, ընտանեկան բռնության դեպքում: Նրանք գործողություններ են իրականացնում բռնության փաստացի կատարումից հետո, այլ ոչ թե հնարավոր բռնության վերաբերյալ ահազանգեր ստանալու ժամանակ: Անգամ բռնության փաստի դեպքում ոստիկանության ծառայողները ոչ միայն պատշաճ աջակցություն չեն ցուցաբերում, այլև բռնության ենթարկվող կանանց աջակցելը չեն համարում իրենց գործը:

Ոստիկանության ծառայողների գործողությունների հետևանքով նաև առողջությանը վնաս պատճառելու դեպքեր են արձանագրվել: Օրինակ՝ օգոստոսի 5-ին Ամուլսարի երկրորդ հենակետի մոտ Ամուլսարի պահապանները և մեծ թվով քաղաքացիներ փակել էին Ջերմուկ քաղաք տանող ճանապարհը: Ոստիկանական մեքենան անցել է ակտիվիստներից մեկի ոտքի վրայով: Ըստ մարզի ոստիկանապետի, ծառայողական քննություն է նշանակվել դեպքի վերաբերյալ:

Նշենք, որ ծառայողական քննության արդյունքների մասին ոստիկանության կողմից որևէ տեղեկություն չի հրապարակվել:

Ոստիկանության ծառայողների կողմից ոչ միատեսակ և անկանխատեսելի վարքագիծ է դրսևորվել նույն իրավիճակում: Մասնավորապես Երևանում ոստիկանության ծառայողներն օգոստոսի 6-ին թույլ չեն տվել Ազատության հրապարակում հեծանվային երթով բողոքի ակցիա իրականացնել՝ ընդդեմ Ամուլսարի հանքի շահագործման: Մասնակիցներից ոմանք անգամ բերման են ենթարկվել մինչև երթի մեկնարկը՝ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու և ապօրինի հավաքներ, երթեր կազմակերպելու համար: Օգոստոսի 13-ին, սակայն, նույն բողոքով հեծանվարշավը կայացավ Մարզահամերգային համալիրի մոտից:

Ըստ այդմ, անհասկանալի է, թե ո՞րն էր այս երկու՝ նույնաբովանդակ միջոցառումների տարբերությունը, որի հիմքով մի դեպքում այն արգելվեց, մեկ այլ դեպքում՝ ոչ: Այսինքն ոստիկանության կողմից նույնաբնույթ ակցիաների հանդեպ դրսևորվում է ակնհայտ տարբերակված, ոչ միատեսակ վարքագիծ, որը ցույց է տալիս, որ ոստիկանությունը շարունակում է ղեկավարվել ոչ թե օրենսդրությամբ և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի սկզբունքներով, այլ՝ ոչ հստակ, սուբյեկտիվ մոտեցումներով, որոնք կարող են ունենալ նաև ակնհայտ քաղաքական նկատառումներ:

Օգոստոսի 10-ին մի խումբ ակտիվիստներ գործագործ էին խաղում ԱԺ դարպասների մոտ: Ոստիկանության ծառայողների՝ դադարեցնելու պահանջին ակտիվիստները պատասխանեցին, որ պարզապես գործնագործ են խաղում և որևէ օրենք չեն խախտում: Հաջորդիվ ոստիկանները մի շարք ակտիվիստների բերման ենթարկեցին:

Նշենք, որ առաջինը՝ ակտիվիստները նախատեսում էին իրենց միջացառումն անցկացնել ԱԺ բակում, սակայն, անհասկանալի պատճառներով, դարպասները փակ էին: Երկրորդը՝ ոստիկանության ծառայողները բռնություն էին գործադրում ակտիվիստների նկատմամբ և բերման ենթարկելու "օպերացիան" կրում էր կամայական և քաոսային բնույթ՝ հիշեցնելով «ով ձեռքի տակ ընկնի» մոտեցումը: Այսինքն ոստիկանության ծառայողները հերթական անգամ գործել են ոչ իրավաչափ:

3. Հավաքների ազատությունը և ռազմական դրությունը

(2020 թ. սեպտեմբերի 27- դեկտեմբերի 31)

2020 թ. սեպտեմբերի 27-ին Հայաստանում հայտարարվեց ռազմական դրություն, և հավաքների ազատության իրավունքն այս անգամ ևս սահմանափակվեց: Նշենք, որ պատերազմի մեկնարկից մինչև նոյեմբերի 9-ը, երբ ստորագրված հայտարարությունը, որով պատերազմը դադարեցվեց, այնուհետև նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերվանից, երբ մի քանի ժամվա ընթացքում ուղիղ հեռարձակվում էին ներխուժումները ՀՀ ԱԺ և կառավարության շենքեր, երբ հարձակում եղավ ԱԺ նախագահի նկատմամբ, մինչև նոյեմբերի 27-ը, երբ ՀՀ վարչական դատարանը վերացրեց հավաքների ազատության արգելքը, և արգելքը վերացնելու հետո իրավիճակները խիստ տարբեր են եղել՝ պահանջելով իրավապահ համակարգից արտակարգ իրավիճակներին ու գործող իրավական կարգավորումներին համարժեք գործողություններ և արձագանքներ, սակայն, ինչպես ցույց են տալիս մշտադիտարկման արդյունքները, ոստիկանության ծառայողները չունեցան բավարար և անհրաժեշտ հմտություններ՝ գնահատելու մարտահրավերների առանձնահատկությունները և գործելու ստեղծված իրավիճակներին համապատասխան:

Սեպտեմբերի 27-նոյեմբերի 9

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծվեց պատերազմ, և Հայաստանում հայտարարվեց ռազմական դրություն: Ոստիկանության ծառայողների կողմից շարունակվեցին անկանխատեսելի, փոփոխվող իրողություններին ոչ համարժեք գործողությունները: Օրինակ՝ մինչև նոյեմբերի 9-ը ոստիկանության ծառայողները չեն խոչընդոտել Արցախի անկախությունը ճանաչելու, միջազգային ահաբեկչությունը դադարեցնելու «Արցախցի մայրերի ձայնը» նախաձեռնության անդամների ակցիան նոյեմբերի 2-ին Հայաստանում ԱՄՆ դեսպանատան մոտ, նոյեմբերի 5-ին՝ Գերմանիայի դեսպանատան մոտ, թեև ռազմական դրությամբ հավաքների անցկացումն արգելված էր:

Նոյեմբերի 9-նոյեմբերի 27

Նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը ստորագրվեց պատերազմը դադարեցնելու մասին եռակողմ հայտարարությունը: Հայտարարության տեքստի հրապարակումից հետո կարճ ժամանակ անց կառավարության շենքի առջև հավաքվեցին մի խումբ անձինք, որոնք ներխուժեցին կառավարության շենք, այնուհետև ԱԺ շենք, վարչապետի կեցավայր, բռնության և ծեծի ենթարկեցին ԱԺ նախագահին՝

հասցնելով ծանր մարմնական վնասվածքներ: Այս ամենը տեղի է ունեցել մի քանի ժամվա ընթացքում, ցուցարարների գործողություններն ուղիղ հեռարձակվել են, սակայն ոստիկանության կողմից որևէ գործողություն չի ձեռնարկվել՝ մայրաքաղաքում հասարակական կարգը վերականգնելու և հնարավոր բախումները, դրանց սաստկացումը կանխելու ուղղությամբ:

ՀՀ վարչապետը իրավապահ մարմինների կողմից այդ դեպքերով համարժեք չարձագանքելը բացատրեց պաշտպանության նպատակով ոստիկանության ուժերի ներգրավված լինելու հանգամանքով, սակայն ՀՀ ոստիկանության կողմից դրա վերաբերյալ որևէ իրավական հիմնավորում չներկայացվեց:

Ոստիկանությունը միայն նոյեմբերի 11-ին հայտարարություն հրապարակեց՝ հիշեցնելով, որ ռազմական դրությամբ պայմանավորված **հավաքներն ու հանրային միջոցառումներն արգելված են** և հորդորեց զերծ մնալ հավաքներ և հանրային միջոցառումներ կազմակերպելուց, անցկացնելուց և դրանց մասնակցելուց: Հայտարարության հաջորդ օրը՝ նոյեմբերի 12-ին, Հանրապետության հրապարակում տեղադրվել էր էկրան, որով հեռարձակվող տեսանյութում կամավորականը սպառնում էր հաշվեհարդար տեսնել խորհրդարանի և կառավարության շենքեր ներխուժած անձանց հետ: Տեսանյութը պարունակել է ատելության խոսք և բռնության քարոզ, ինչը որևէ արձագանքի չի արժանացել ոստիկանության կողմից:

Այսպիսով, ատելության և սպառնալիքի խոսքերով, ակնհայտ բռնության դեպքերի կանխման ուղղությամբ ոստիկանությունը չի կարողացել անհրաժեշտ և բավարար գործողություններ իրականացնել՝ ապահովելու հասարակական անվտանգությունը:

Միևնույն ժամանակ նոյեմբերի 11-ին Ազատության հրապարակում կազմակերպված՝ «Արցախի հողերը հանձնելու Ալիև-Փաշինյան-Պուտին պայմանագիրը չեղյալ հայտարարելու» պահանջով ատելության, բռնությունների կիրառման սպառնալիքներով ուղեկցվող հանրահավաքի մասնակիցներին ոստիկանությունը և ԱԱԾ-ն բռնի ուժով բերման ենթարկեց: Ցանկացել են բերման ենթարկել նաև ԱԺ փոխնախագահ, ԲՀԿ խմբակցության պատգամավոր Վահե Էնֆիաջյանին. նրան տանում էին դեպի ոստիկանական մեքենան, այնուհետև, սակայն, մտափոխվում և բաց են թողնում:

Անհասկանալի է, եթե նա կատարել է իրավախախտում, որի համար բերման պետք է ենթարկեր, ապա ինչու՞ մտափոխվեցին, իսկ եթե չէր կատարել, ինչու՞ էին բերման ենթարկում: Այս օրինակը մեկ անգամ ևս փաստում է ոստիկանության ծառայողների կամայական մոտեցումը բերման ենթարկելիս:

Նոյեմբերի 27-դեկտեմբերի 31

Նոյեմբերի 27-ին հավաքների կազմակերպման արգելքը վերացվեց, սակայն ոստիկանության ծառայողները կրկին փոփոխված իրավիճակին համարժեք չգործեցին: Օրինակ՝ նոյեմբերի 30-ին անհնազանդության ակցիա էր կազմակերպվել Մաշտոցի պողոտայում. մի խումբ քաղաքացիներ փակել էին Ֆրանսիայի հրապարակը: Ոստիկանությունն ուժի կիրառմամբ բերման էր ենթարկում մասնակիցներին: Ըստ aravot.am կայքի՝ ոստիկանության ծառայողները պատճառաբանել են՝ «թե բերման են ենթարկում, քանի որ քաղաքացիները չեն կատարում նրանց օրինական պահանջը»: Aravot.am-ի հետ զրույցում ոստիկանության հասարակայնության հետ կապի և լրատվության վարչության պետ Աշոտ Ահարոնյանը նշել է, որ ցույցի մասնակիցներից բերման են ենթարկել 33 քաղաքացու, որոնց նկատմամբ կազմվել է արձանագրություն ոստիկանության օրինական պահանջը չկատարելու հիմքով: Այս համատեքստում հատկանշական է Երևանի փոխոստիկանապետ, գնդապետ Արթուր Խուդինյանի՝ «բացի աղջիկներից բոլորին պետք է բերման ենթարկել» հայտարարությունը:

Այսինքն, կարող ենք եզրակացնել, որ կա՛մ Հայաստանում օրենքի խախտումը գենդերային հիմքով է մեկնաբանվում, կա՛մ ոստիկանության ծառայողները պարզապես հրահանգ են կատարում և բերման են ենթարկում ոչ թե իրավախախտման համար, այլ ավանդույթի համաձայն՝ կամայականության սկզբունքով և նույն մոտեցմամբ էլ արձանագրություններն են կազմում:

Դեկտեմբերի 4-ին Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) երիտասարդական կազմակերպության նախագահ Հայկ Մամիջանյանը ֆեյսբուքյան իր էջում գրել է. «Կառավարության շենքի մոտ բերել էինք դեղերը: Այս պահին բերման ենք ենթարկվել ոստիկանության կենտրոնի բաժանմունք»: Նշենք, որ դեկտեմբերի 8-ին իշխանության հրաժարականը պահանջող ցուցարարները դուխիներ և ժամացույցներ էին թողել ԱԱԾ շենքի մոտ «Նիկոլի համար», սակայն այս դեպքում որևէ մեկը բերման չենթարկվեց: Դեկտեմբերի 16-ին անհայտ կորած զինծառայողների ծնողները ոստիկանության ծառայողների ներկայությամբ կոտրել են Պաշտպանության նախարարության ճաղավանդակը՝ փորձելով ներս մտնել: Այս դեպքում ևս որևէ իրավական արձագանք նշյալ գործողությունները չունեցան:

Անհասկանալի է, թե ինչ չափանիշներով կամ սկզբունքներով են առաջնորդվում ոստիկանության ծառայողները բողոքի ակցիաներին միջամտելիս և անձանց բերման ենթարկելիս՝ վտանգավորության աստիճանո՞վ, հատուկ պաշտպանվող կառույց լինելու փաստո՞վ, թե, այնուամենայնիվ, հրահանգո՞վ: Ինչու՞ մի դեպքում դեղահաբ դնողը բերման է ենթարկվում, մեկ այլ դեպքում՝ դուխի դնողները՝ ոչ:

Ոստիկանության ծառայողները նույնաբովանդակ ակցիաներին տարբեր գործողություններով են արձագանքել: Օրինակ, դեկտեմբերի 8-ին ոստիկանության ծառայողները մայրաքաղաքի տարբեր հատվածներում ՀՀ վարչապետի հրաժարականի պահանջով անհնազանդության ակցիա անող անձանց բերման էին ենթարկում որոշ փողոցներից: Մասնավորապես Մաշտոց-Թումանյան խաչմերուկում հետապնդել են քայլերթ իրականացնող քաղաքացիներին, հետևից առանց որևէ նախազգուշացման հարձակվել նրանց վրա և բերման ենթարկել ուժի կիրառմամբ, մինչդեռ, օրինակ, Սարյան-Պուշկին խաչմերուկում անհնազանդության ակցիա իրականացնող քաղաքացիները ոստիկանության ծառայողների կողմից հեռացվել են ճանապարհից, բայց բերման ենթարկելու դեպքեր չեն եղել: Բերման չեն ենթարկվել նաև Աբովյան փողոցը փակած քաղաքացիները: Անհնազանդության ակցիաների ժամանակ ոստիկանության ծառայողները հրել, բերման են ենթարկել քաղաքացիներին՝ հարձակվելով մայթին կանգնածների վրա:

Անհասկանալի է, թե որ պահին և ինչ հիմքով են ոստիկանության ծառայողները որոշում կայացնում միջամտել բողոքի ակցիաներին, բացել կամ չբացել ճանապարհը, կամ հավաքի մասնակիցներին բերման ենթարկելու կամ չենթարկելու որոշումներ կայացնում:

Ոստիկանության գործողությունների հետևանքով նաև առողջության վնաս է պատճառվել հավաքների մասնակիցներին: Օրինակ՝ ակցիայի մասնակիցներից մեկի ինքնազգացողությունը վատացել է և նրան շտապօգնության մեքենայով տեղափոխել են հիվանդանոց, մեկ այլ դեպքում՝ բերման ենթարկելու պահին մասնակիցներից մեկը գլուխը հարվածել է հատակին:

Միանշանակ նոյեմբերի 9-ից հետո, հաշվի առնելով իրողությունները, կտրուկ աճել էր հնարավոր բռնությունների վտանգը: Այնուամենայնիվ պետք է արձանագրենք, որ ոստիկանությունը պատշաճ չգնահատեց և համարժեք վարքագիծ չդրսևորեց:

Քաղաքացիական հագուստով անձինք, տարբերանշան չունեցող մեքենաներ

Ոստիկանությունն շարունակել է դիմել քաղաքացիական հագուստով անձանց ծառայություններին: Օրինակ՝ դեկտեմբերի 11-ին վարչապետի հրաժարականի պահանջով Սևան-Երևան մայրուղին փակած քաղաքացիներից մեկին քաղաքացիական հագուստով անձինք ճանապարհը բացելու պահանջ են ներկայացրել, այնուհետև մեղադրելով ոստիկանության օրինական պահանջը չկատարելու մեջ՝ բերման ենթարկելու հրահանգ տվել և նստեցրել ոչ ծառայողական մեքենա (տեսագրության 7:30 րոպեից):



Նշենք, որ քաղաքացիական հագուստով անձը լրագրողների հարցին ի պատասխան ներկայացել է որպես ոստիկանության ծառայող, իսկ երբ պնդել են պատշաճ ներկայանալ՝ ներկայացել է որպես Չարենցավանի ոստիկանության բաժնի պետ՝ Սիրականյան Էդուարդ:

«Չինական համազգեստ»

Հետպատերազմյան իրադարձությունների գագաթնակետն էր ոստիկանության կողմից սևազգեստ դիմակավորված անձանց ներգրավումը, որոնք ցուցարարների նկատմամբ բռնի ուժ էին կիրառում և բերման ենթարկում:

Աղբյուրը՝ photolure www.aravot.am

Հատկանշական է, որ ոստիկանապետ Վահե Ղազարյանը պարզաբանել է, որ «...դիմակավորված անձինք ոստիկանական զորքերի ծառայողներ են, իսկ պաշտպանիչ միջոցների անհրաժեշտությունը բխել է անվտանգության ապահովման նկատառումներից»:Ոստիկանության լրատվական բաժնից hraparak.am կայքի հարցին ոստիկանությունից պատասխանել են, որ «Ոստիկանության զորքերը մասնակցել են ռազմական գործողություններին, և վերադառնալուց հետո նրանց հագուստները պիտանի չեն եղել կրման համար: Պահեստավորված համազգեստ է հատկացվել, որոնց վրա ժամանակի սղության պատճառով հնարավոր չի եղել հայատառ գրություն կատարել»:

Այսինքն՝ նույն կառույցը երկու տարբեր պարզաբանում է ներկայացնում նույն իրավիճակին: Նշենք, որ համաձայն «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի՝ հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս ոստիկանության ծառայողները ***պարտավոր են կրել սահմանված ձևի համազգեստ****, որի վրա տեսանելի մասում փակցվում են ոստիկանության ծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշաններ: Այս դեպքում նույնիսկ եթե վերապահումով ընդունելի լինի Ոստիկանության մեկնաբանությունը «պահեստավորված համազգեստի և ժամանակի ստության մասին», անհասկանալի և անընդունելի է, այդ անձանց դիմակավորված լինելը: Առհասարակ հրապարակային միջոցառումների իրականացման ժամանակ հասարակական կարգի պահպանմանը քաղաքացիական հագուստով և առավել ևս դիմակավորված անձանց ներգրավումը հակասում է ոստիկանության գործողությունների կանխատեսելիության և որոշակիության պահանջներին ու լի է վատ վերաբերմունքի և անպատժելիության ռիսկերով:*

Լրագրողներ

Լրագրողների աշխատանքը խոչընդոտվել է ոչ միայն ոստիկանության ծառայողների գործողությունների, այլ նաև նրանց անգործության հետևանքով: Մասնավորապես արձանագրվել է մի քանի դեպք, երբ որոշ լրատվամիջոցների ներկայացուցիչների աշխատանքը խոչընդոտվել է ցուցարարների կողմից, նրանց հասցեին հնչեցվել են հայհոյանքներ և սպառնալիքներ, սակայն ոստիկանության ծառայողները ոչ ընթացքում և ոչ էլ հետո որևէ գործողություններ չեն ձեռնարկել միջադեպերն ուսումնասիրելու և մեղավորներին բացահայտելու ուղղությամբ:

Արձանագրվել է նաև լրագրողի բերման ենթարկելու դեպք: Դեկտեմբերի 28-ին ԱԺ դիմաց բողոքի ակցիաների ժամանակ ոստիկանական գործողությունների ընթացքում բերման է ենթարկվել PARA TV լրատվական կայքի օպերատոր Վազգեն Համբարձումյանը: Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ որոշ լրագրողներ իրենց աշխատանքներն իրականացնելիս ակնհայտ դրսևորել են ակցիայի մասնակցի վարքագիծ:

4. Ոստիկանություն vs դատական ատյաններ

2018 թ. ապրիլյան հեղափոխությունից հետո մի քանի դեպքում դատարաններն անօրինական են ճանաչել ոստիկանության կողմից ձերբակալումները: 2020 թ. ընթացքում նույնպես դատարանները խաղաղ հավաքներ իրականացնելու իրավունքի իրացման հետ կապված մի շարք դեպքերում ձերբակալությունները ճանաչել են ոչ իրավաչափ: Օրինակ՝ նոյեմբերի 21-ին Մաշտոցի պողոտայից բողոքի ցույցի ժամանակ բերման էր ենթարկվել ՀՀԿ խորհրդի անդամ Հայկ Մամիջանյանը, որին ձերբակալել էին ՀՀ Քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածով՝ օրենքով սահմանված կարգի խախտման, հավաքներ կազմակերպելու համար: Նույն օրը դատարանը ոչ իրավաչափ ճանաչեց ձերբակալությունը: Ոչ իրավաչափ է ճանաչվել նաև ԱԺ աշխատակազմի նախկին ղեկավար Արա Սաղաթելյանի ձերբակալությունը:

Հաշվի առնելով դատարանների նկատմամբ վստահության ցածր մակարդակը, ինչպես նաև ոստիկանության ծառայողների անկանխատեսելի, ոչ իրավաչափ, ոչ միատեսակ գործողությունները՝ հանրության համար ստեղծվել է փակուղային իրավիճակ՝ ի վերջո որ որոշումն է իրավաչափ և օրենքին համապատասխան՝ ոստիկանության, թե՝ դատավորի: Մինչդեռ այս լարված իրավիճակում իրավական համակարգի (ինչպես ոստիկանության, այնպես էլ դատարանների)՝ հասարակական կարգի և

կայունության ապահովմանն ուղղված գործողությունները պետք է ավելի քան երբևէ հիմնված լինեն իրավունքի գերակայության սկզբունքի վրա։

5. Հակաժողովրդավարական գործողությունները և ոստիկանության անգործությունը

2018 թ. հեղափոխությունից հետո իրավապահ համակարգը բախվեց նոր մարտահրավերի, որին պատշաճ արձագանքելու բավարար կարողություն չդրսևորեց։ Մասնավորապես խոսքը հանրային մեծ ակտիվությամբ հանդես եկող մի շարք նախաձեռնությունների և շարժումների մասին է, որոնք դիրքավորվում են որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտներ, սակայն նրանց օրակարգը ոչ թե մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների պաշտպանությունն ու խթանումն է, այլ հակառակը՝ «պայքարը» Հայաստանում այդ արժեքների դեմ։

Օրինակ՝ 2018 թ. աշնանը ստեղծված «Կամք» հասարակական նախաձեռնությունը, որը հետևողական քարոզարշավ է իրականացնում Հայաստանի կողմից մարդու իրավունքների հիմնարար փաստաթղթերի վավերացման դեմ, 2019 թ.-ից ստորագրահավաք է նախաձեռնել Երևանում և մարզերում Ստամբուլյան կոնվենցիան վավերացնելու դեմ։ Նախաձեռնության անդամները, որոնք ջատագովություն են իրականացնում կանանց նկատմամբ բռնությունը դատապարտող փաստաթուղթը վավերացնելու դեմ, Սպիտակ քաղաքում բռնություն են կիրառել ստորագրահավաքին մասնակցել չցանկացող կանանց պաշտպանող տարեց մարդու նկատմամբ։

Արձանագրենք, որ թեև միջոցառման մասին նախապես հրապարակավ հայտարարվել էր, ոստիկանության որևէ ծառայող ներկա չէր՝ հնարավոր բախումները կանխելու և հասարակական կարգն ապահովելու համար։

2020 թ. մայիսի 11-ին նույն «Կամք» նախաձեռնության անդամները հավաքվել էին ԱԺ դիմաց և պահանջում էին պատգամավորներից դեմ քվեարկել Լանզարոտի կոնվենցիայի վավերացմանը։ Ոստիկանության ծառայողները չեն արգելել ակցիան, այլ միայն հորդորել են մասնակիցներին պահպանել սոցիալական հեռավորությունը (տեսագրության 40:29 րոպեից)։

Նման նախաձեռնության մեկ այլ օրինակ է «ՎԵՏՕ» հասարակական-քաղաքական շարժումը, որը ստեղծվել է 2019 թ. մայիսին՝ երկրում գործող Բաց հասարակության հիմնադրամի և նրա հետ համագործակցող հասրակական կազմակերպությունների գործունեության դեմ պայքարելու նպատակով։ Նշենք,որ **«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»** (ԲՀՀ-Հայաստան) գրասենյակը Հայաստանում գործում է 1997 թ.-ից և աջակցում է մարդու իրավունքների պաշտպանությանը, օրենքի գերակայության, արդարադատության, հաշվետվողականության և թափանցիկության ամրապնդմանը։ Դեռևս նախկին, մինչհեղափոխական իշխանությունների օրոք ԲՀՀ-Հայաստանի գրասենյակի և նրա հետ համագործակցող կազմակերպությունների, անհատների դեմ հարձակումները, որոնք հովանավորվում էին ժամանակի իշխանությունների կողմից, շարունակվեցին նաև հեղափոխությունից հետո, նոր իշխանությունների օրոք՝ վերջիններիս անգործության պայմաններում։ Նախորդ իշխանությունների օրոք նման հարձակումները մնում էին անպատիժ, քանի որ բխում էին նրանց կառավարման հակաժողովրդավարական բնույթից և որոնք ի դեպ խրախուսվում էին և շարունակում են խրախուսվել մերձկրեմլյան շրջանակների կողմից։ Հեղափոխությունից հետո նման հարձակումներն անպատիժ շարունակվեցին։ Հայաստանի իրավապահ մարմինները, որպես կանոն,

մնացին դիտորդի դերում: Օրինակ՝ 2020 թ. դեկտեմբերի 12-ին ոստիկանության ծառայողները պարզապես հետևում էին, թե ինչպես է «ՎԵՏՕ» շարժման հիմնադիր Նարեկ Մալյանը կարմիր գույնի ներկ լցնում ԲՀՀ-Հայաստան գրասենյակի առջև՝ ներկայացնելով այդ ներկը որպես պատերազմի զոհերի արյուն և մեղադրելով գրասենյակին այդ զոհերի համար:

Հակաժողովրդավարական և մարդու իրավունքների դեմ օրակարգ ունեցող ծայրահեղական նախաձեռնություններն ու խմբավորումներն իրենց էությամբ հակասահմանադրական են, հանդես են գալիս սահմանադրական կարգի դեմ, իսկ իրավապահները ոչ միայն չեն կանխում այդ նախաձեռնությունների՝ մարդու իրավունքների դեմ քարոզարշավները, այլև ապահովում են բողոքի ակցիաների անցկացումը: Նման վերաբերմունքը մեկ անգամ ևս փաստում է, որ համակարգն ի զորու չէ ճիշտ գնահատել իրողությունները և պատշաճ արձագանքել առաջացող մարտահրավերներին՝ ժողովրդավարական և իրավական պետության սկզբունքներին համարժեք:

Այսպիսով, ոստիկանության ծառայողների կողմից անհամաչափ ուժի կիրառումը, բռնի և կամայական բերման ենթարկելու գործողություններն ինչպես ակցիաների մասնակիցների, այնպես էլ դրանք լուսաբանող լրագրողների նկատմամբ վկայում են ոստիկանությունումում համակարգային խնդիրների առկայության մասին, որոնք այդպես էլ լուծում չեն ստանում: Ոստիկանական համակարգը, չնայած հռչակված բարեփոխման ռազմավարության, փաստացի այդպես էլ արմատական փոփոխության չենթարկվեց, և ծառայողներն այդպես էլ խաղաղ հավաքների ազատության իրավունքի ապահովման և անհրաժեշտության դեպքում այդ հավաքների խաղաղ բնույթը խոչընդոտող անձանց նույնականացնելու հմտություններ ձեռք չբերեցին: Բերման ենթարկելու դեպքերը շարունակում են կրել կամայական բնույթ, ուժի կիրառումը՝ անհամաչափ է, ոստիկանության պարզաբանումները՝ հակասական:

Ոստիկանությունը չկարողացավ համարժեք մոտեցում ցուցաբերել ժողովրդավարական և իրավական պետության սկզբունքների դեմ ծայրահեղական խմբերի հարձակումները կանխելու ուղղությամբ:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԴԵՊՔԵՐ

ՀՀ ոստիկանապետ Արման Սարգսյան
«Ոստիկանության նպատակը ուժ կիրառելը չէ, կյանքեր փրկելն է: Ոստիկանությունն օրենքով սահմանված կարգով ֆիզիկական ուժ կիրառել է և կիրառելու է»

1. 2020 թ.-ին ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած անհատական բնույթի դեպքերի ամփոփում

2020 թ. ԶԼՄ-երի հրապարակումներով արձանագրվել է ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 81 անհատական բնույթի դեպք: Հիմնականում խախտվել են ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը՝ 32 դեպք (39,5%), ու անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը՝ 30 դեպք (37%): Խախտվել են նաև առողջության, ազատ տեղաշարժվելու, արդար դատաքննության, խտրականությունից, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, սեփականության, բնակարանի, գույքի անձեռնմխելիության, իրավաբանական օգնություն ստանալու, խոսքի ազատության, տեղեկատվություն ստանալու իրավունքները, ինչպես նաև 6 դեպքում խոչընդոտվել է լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեությունը:

Անհատական բնույթի 81 դեպքերից 58-ը տեղի է ունեցել քաղաք Երևանում, 6-ը՝ Սյունիքի մարզում, 4-ը՝ Շիրակի մարզում, 3-ը՝ Լոռու մարզում, երկուական դեպք՝ Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում, մեկական դեպք՝ Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում: Երկու դեպք պայմանականորեն համարել ենք ՀՀ ամբողջ տարածքը՝ պայմանավորված համավարակի կանխարգելման կանոնների վերահսկման գործառույթների իրականացնելիս անհամաչափ գործողությունները:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված դեպքերը՝ ըստ խախտված իրավունքի և ոստիկանության գործողության տեսակի (անգործության), առավել մանրամասն հասանելի են այս հղմամբ:

2. Անհատական դեպքերը արտակարգ դրության ժամանակ

(2020 թ. մարտի 16-սեպտեմբերի 11)

COVID-19 համավարակի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պահանջների կատարման վերահսկողության հարցում մեծ դերակատարություն ունեին ոստիկանության ծառայողները, սակայն նրանք չկարողացան պատշաճ, օրենքի սահմաններում իրականացնել իրենց գործառույթները: Մասնավորապես ՀՀ ոստիկանությունը տեղեկացրել էր, որ ծառայություն են իրականացնում, ի թիվս այլնի, բանկերի, սուպերմարկետների և այլ

հաստատությունների հարակից տարածքներում, սակայն այդ ժամանակահատվածում արձանագրվել են մեծ հերթեր այդ հաստատությունների հարակից տարածքներում և չի ապահովվել ֆիզիկական հեռավորության պահպանումը: Նրանք նաև ժամանակին չեն արձագանքել ահազանգերին, անուշադրության են մատնել անձանց կուտակումների փաստերը՝ փոխարենը պահանջներ ներկայացնելով միայնակ տեղաշարժվողներին: Բացի այդ ոստիկանության ներկայացուցիչները հսկողությունն իրականացրել են խմբերով, ինչը ոչ միայն համավարակի փոխանցման վտանգ է ներկայացնում, այլ նաև մարդկային ռեսուրսի անարդյունավետ օգտագործում է: Նշենք, որ ոստիկաններն իրենք ոչ միշտ են դիմակ կրել:

Հարկ է անդրադառնալ նաև ոստիկանության ծառայողների կողմից բռնության կիրառման դեպքերին: Ապրիլի 7-ին Սիսիանում ոստիկանության ծառայողների և քաղաքացիների միջև տեղի ունեցավ միջադեպ, երբ ոստիկանները բռնության ենթարկեցին Սիսիանի բնակիչներին տեղաշարժման ձևաթուղթ չունենալու պատճառով: Հունիսի 12-ին Սպիտակ քաղաքում ոստիկանության ծառայողները բռնություն են կիրառել և ոչ ծառայողական մեքենա նստեցրել դիմակը պատշաճ չկրող տիկնոջը, ինչին ՀՀ վարչապետը հետևյալ գնահատականն է տվել «Ոստիկանները սխալ են քաղաքացու հետ **«Դուք»-ով**, հարգալից և պաշտոնական բառապաշարով **չխոսելու համար**, ինչի կապակցությամբ արժանի են բանավոր նկատողության: Մնացած մասով ճիշտ են գործել և **արժանի են խրախուսման**»:

*Փաստենք, որ ՀՀ քաղաքացուն պահանջ ներկայացնող ոստիկանության աշխատակից ներկայացած անձանցից մեկը **քաղաքացիական հագուստով էր**, ինչպես նաև համաձայն տեսագրության՝ ավտոմեքենան **ոստիկանական մեքենայի տարբերանշաններ չուներ**: Ըստ այդմ, քաղաքացիական հագուստով ոստիկանության աշխատակիցների գործողությունները ոչ միայն խրախուսման արժանի չեն, այլև հակաօրինական են: Ավելին, քաղաքացիական հագուստով ոստիկանության աշխատակցի մասնակցությամբ տարբերանշան չունեցող ավտոմեքենայով քաղաքացուն բերման ենթարկելը կարող է դիտարկվել որպես առևանգում:*

Մեկ այլ դեպքում ոստիկանության ծառայողների կողմից դիմակ չկրելու համար քաղաքացին տապալվել է գետնին և չնայած նրա՝ ոստիկանի պահանջին ենթարկվելու հավաստմանը՝ նրան ձեռնաշղթա են հագցրել և բերման ենթարկել: Ոստիկանության գործողություններն իրավաչափ են գնահատել ՀՀ արդարադատության նախարարը, ոստիկանապետը և ՀՀ վարչապետը, ոչ իրավաչափ՝ մարդու իրավունքների պաշտպանը:

Նշենք, որ պարետի կողմից անհատական պաշտպանության և արտակարգ դրության պահանջները չպահպանելու համար սահմանված էին համապատասխան պատժամիջոցներ: Ըստ այդմ, ոստիկանության ծառայողներն ունեին համապատասխան գործիքակազմ: Այդ պայմաններում քաղաքացիների նկատմամբ ֆիզիկական ուժի կիրառումը չի կարող իրավաչափ համարվել:

Հուլիսի 21-ին Հանրապետության հրապարակում ոստիկանները մոտեցել են կնոջը, հորդորել դիմակը ճիշտ դնել, սակայն նա պնդել է, որ չի կարողանում շնչել և չի կարող դիմակ կրել: Այնուհետև նրան տեղափոխել են բաժին, որտեղ թույլ չեն տվել նկարել դիմակ չկրող ոստիկաններին: Ավելին, նրան ասել են, որ նկարելու իրավունք չունի, քաշքշել ու վերցրել են հեռախոսը:

Արձանագրենք, որ քաղաքացին իրավունք ունի նկարահանելու ոստիկանության ցանկացած գործողություն:

Սեպտեմբերի 15-ին Գյումրու կենտրոնում վիճաբանություն է տեղի ունեցել մի ընտանիքի ու տարածքը հսկող ոստիկանների միջև, երբ դիմակը պատշաճ չկրելու համար ոստիկանները տուգանել են ընտանիքի անդամին, իսկ վերջինս ընդդիմացել է: Ուղիղ եթեր մտած ականատեսի պատմելով, ոստիկանները հարազատների ներկայությամբ քաշքշել են քաղաքացուն, գցել գետին, հարվածել, իսկ կինը, որի գրկում եղել է անչափահաս երեխան, ուշաթափվել է: Տեղում աշխատող ոստիկանները, որոնք զանգահարել էին «Կումայրի» բաժին՝ ոստիկանական ուժեր խնդրելով, քաղաքացուն բերման են ենթարկել:

Հատկանշական է, որ ոստիկանության ծառայողներից մեկը ***դիմակ չի կրում****, իսկ մեքենան, որից դուրս է գալիս ոստիկանը և որով տեղափոխում են քաղաքացուն, ոստիկանության մեքենայի տարբերանշաններ չունի (տեսագրություն 0:48 րոպեից):*

Աղբյուրը՝ www.aravot.am

Արտակարգ դրություն հայտարարելու վերաբերյալ որոշմամբ արգելք սահմանվեց նաև ԶԼՄ-ներով առանձին հրապարակումների և հաղորդումների նկատմամբ, ինչը հանգեցրեց խոսքի ազատության և կարծիքի ազատ արտահայտման իրավունքների անհամաչափ և ոչիրավաչափ սահմանափակման: Մասնավորապես կիրառվեցին ԶԼՄ-ներով հրապարակումների և հաղորդումների արգելքներ՝ պահանջվելով համաճարակի վերաբերյալ հրապարակումները կատարել «…**միայն պարետատան կողմից տրամադրված տեղեկատվությանը** … **հղում կատարելով**»:

Նշենք, որ Կառավորության այս արգելքը քննադատվեց մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից: Այս արգելքը խստացվեց մարտի 24–ի փոփոխություններով, իսկ ապրիլի 13-ի փոփոխություններով՝ ուժը կորցրած ճանաչվեց:

Մինչև արգելքի վերացումը սույն պահանջը կատարելու վերահսկողության գործին ներգրավվել էին նաև ոստիկանության ծառայողները, որոնք, օրինակ, հրապարակումը հեռացնելու պահանջով քաղաքացուն այցելել են կեսգիշերն անց և խուճապ առաջացրել շենքի բնակիչների մոտ:

3. Անհատական դեպքերը ռազմական դրության ժամանակ

(2020 թ. սեպտեմբերի 27-դեկտեմբերի 31)

Խոսքի ազատության սահմանափակում է կիրառվել և ոստիկանության ոչ իրավաչափ գործողություններ են արձանագրվել նաև ռազմական դրության ժամանակ: Օրինակ՝ իրավապաշտպան

Գեորգի Վանյանի՝ պատերազմը դադարեցնելու և բանակցություններ սկսելու մասին Փաշինյանին ուղղված բաց նամակից հետո նրան են այցելել Իջևանի ոստիկանության ներկայացուցիչները և պահանջել հեռացնել այն ֆեյսբուք սոցիալական ցանցից: *Նշենք, որ համաձայն eprees.am կայքի, պահանջը գրավոր չի եղել:*

Ոչ իրավաչափ և ոչ մասնագիտական վարքագիծ է դրսևորվել նաև իրավաբանների և իրավապաշտպանների նկատմամբ: Մասնավորապես նոյեմբերի 12-ին, երբ փաստաբան Արայիկ Պապիկյանն Ազատության հրապարակում կազմակերպված հանրահավաքից բերման ենթարկված «Սասնա Ծռեր»-ի անդամներից մեկի պաշտպան ներգրավվելու համար ներկայացել էր ոստիկանություն, քննիչն ասել է, որ չի կարող որպես պաշտպան ներգրավվել, քանի որ իր անունը ևս ներառված է այն անձանց ցուցակում, ովքեր պետք է բերման ենթարկվեն:

Հետաքրքիր է, թե ինչ ցուցակի մասին է խոսքը, ի՞նչ հիմքով է կազմվել այդ ցուցակը, ի՞նչ նպատակով և ինչպիսի՞ գործողություններ էին ձեռնարկելու իրավապահ մարմինները, եթե Արայիկ Պապիկյանը «պատահմամբ» չհայտնվեր բաժանմունքում:

Նոյեմբերի 25-ին Կառավարության շենքի մոտով անցնելիս բերման է ենթարկվել իրավապաշտպան Ավետիք Իշխանյանը՝ ծեծի ենթարկելու կասկածանքով, որևէ փաստ կամ հիմնավորում նման կասկածանքի համար չներկայացնելով:

Հատկանշական է, որ ըստ իրավապաշտպանի, միջադեպը տեղի է ունեցել ոստիկանության ծառայողների ներկայությամբ և եթե անգամ Ավետիք Իշխանյանը ծեծի է ենթարկել որևէ մեկին, ապա նվազագույնը ոստիկանության ծառայողները կարող էին կանխել այն: Փաստորեն, ոստիկանության ծառայողները չեն ունեցել անհրաժեշտ բավարար հմտություններ և կարողություն նախ՝ կանխելու միջադեպը, իսկ այն տեղի ունենալուց հետո՝ հարթելու և անձին/անձանց ազատությունից չզրկելու համար:

4. Բռնության և խոշտանգման դեպքերի արտացոլումը ՀՔԾ պաշտոնական կայքէջում (2015-2020 թթ.)

Հաշվետու տարում ՀՔԾ կայքի «Լուրեր» բաժնում տեղադրվել է **61 հրապարակում**, որոնցից միայն մեկն էր վերաբերում ոստիկանության ծառայողների կողմից խոշտանգման ենթադրյալ դեպքին, այն դեպքում, երբ միայն **2 ամսվա ընթացքում ոստիկանության աշխատակիցների կողմից արժանապատվությունը նվաստացնելու, ֆիզիկական և հոգեբանական բռնությունների, խոշտանգման դեպքերով ՀՔԱՎ են դիմել 8 քաղաքացիներ**: Հատկանշական է, որ ՀՔԾ կայքում դեպքին անդրադարձ եղել է ԶԼՄ հրապարակումից 9 օր հետո: ԶԼՄ-ներում ծանրամարտիկ Արմեն Ղազարյանի պատմությունն առ այն, որ «սեպտեմբերի 6-ի գիշերն իրեն խոշտանգել են Նոր Նորքի ոստիկանության բաժնում» հրապարակվել էր սեպտեմբերի 17-ին, իսկ ՀՔԾ պաշտոնական կայքում խոշտանգելու կասկածանքով երեք օպերլիազորների ձերբակալելու մասին տեղեկությունը՝ սեպտեմբերի 26-ին: Նշենք, որ ՀՔԾ կայքում նախաքննությունն ավարտելու, գործի հետագա ընթացքի մասին մինչև հաշվետու տարվա վերջ որևէ հրապարակում չի զետեղվել:

2019 թ. 65 հրապարակումից ոստիկանության ծառայողների կողմից բռնություն կիրառելու վերաբերյալ որևէ հրապարակում չի եղել, իսկ խոշտանգման վերաբերյալ 3 հրապարակում է եղել,

որոնցից մեկը վերաբերում է 2018 թվականին Սևանի բաժնում տեղի ունեցած խոշտանգմանը, մյուս երկուսը՝ նույն, մեծ հնչեղություն ստացած 2008 թվականին տեղի ունեցած դեպքի տեսագրությանը, որում երևում է, թե ինչպես են ոստիկանական բաժանմունքում քաղաքացիական հագուստով ոստիկանները խոշտանգում քաղաքացուն, հակագազով և մահակով ցուցմունք կորզում: Ավելին, 2019 թ.-ին տեղի ունեցած բռնության կամ խոշտանգման որևէ դեպքի վերաբերյալ որևէ հրապարակում չի եղել, այն դեպքում երբ ԶԼՄ-ներում հրապարակվել է ոստիկանության բաժանմունքներում խոշտանգման նվազագույնը 4 դեպքի մասին, իսկ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հարցմանն ի պատասխան ոստիկանությունից տեղեկացրել են, որ 2019 թ. հաշվառվել է **39 գործ «Խոշտանգում» հոդվածի հատկանիշներով**, որոնցից 24 կարճվել է, իսկ 3-ը՝ կասեցվել: Դատարան է ուղարկվել 2 գործ: **ՀՔԾ-ն նույն տարում քննել է 55 գործ**, որից 4-ն ուղարկվել է դատարան: 30 գործի վարույթը կարճվել է՝ արդարացնող հիմքով (*տե՛ս ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 2019-ին Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկանքը*):

Ինչ վերաբերում է ոստիկանության ծառայողների կողմից բռնության և խոշտանգման դեպքերի վերաբերյալ ՀՔԾ կայքում հրապարակումներին 2015-2020 թթ. ընթացքում, ապա, ինչպես ցույց են տալիս կայքի «Լուրեր» բաժնի մշտադիտարկման արդյունքները, դրանց թիվը 2018 թ. հեղափոխությունից հետո կտրուկ նվազել է: (*տե՛ս գծապատկեր 1*):

Գծապատկեր 1՝ ՀՔԾ կայքում ոստիկանության ծառայողների կողմից բռնության և խոշտանգման վերաբերյալ հրապարակումների թիվը 2015-2020 թթ.



Ինչպես երևում է գծապատկերից, 2019 թ. ՀՔԾ կայքի հրապարակումների թիվը նախորդ տարիների համեմատ միջինում 10 անգամ նվազել է: Հատկանշական է, որ հեղափոխական 2018 թ.-ին ոստիկանության ծառայողների կողմից բռնության և խոշտանգման դեպքերի վերաբերյալ 34 հրապարակումից 29-ը (այն է՝ 82,3%) եղել է առաջին կիսամյակում, այսինքն՝ մինչև ՀՔԾ պետի փոփոխությունը:

Մեջբերված տվյալներից կարելի է ենթադրել, թե ոստիկանության բաժանմունքում անձանց նկատմամբ այլևս բռնություն չի գործադրվում, նրանց իրավունքները չեն խախտվում, սակայն, ԶԼՄ հրապարակումները, քննվող գործերի թվի վերաբերյալ ՀՔԾ տրամադրած տվյալները, ինչպես նաև հավաքների և հանրային միջոցառումների ժամանակ ոստիկանության ծառայողների բռնի, հակաիրավական և ոչ միատեսակ գործողությունները հիմք են տալիս պնդելու, որ ՀՔԾ կայքը պատշաճ չի լուսաբանում իրավապահ մարմինների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերով հարուցված քրեական գործերը, նյութերի նախապատրաստման և քննության իրականացման ընթացքը:

Արդյունքում պաշտոնական մարմնի կողմից խախտվում է հանրության օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու իրավունքը խոշտանգումներից, արժանապատվությունը նվաստացնելու վերաբերմունքից զերծ մնալու բացարձակ իրավունքի խախտման դեպքերի և այդ հիմքով քրեական գործերի հարուցման, նախաքննության ընթացքի մասին: Հատկանշական է, որ ՀՔԾ-ն իր հրապարակումներում հղում է կատարում ***օբյեկտիվ, անաչառ և ամբողջական տեղեկատվություն ստանալու քաղաքացիների իրավունքին****, սակայն, ինչպես վկայում է հրապարակումների բացակայության փաստը, ՀՔԾ-ն խախտում է այդ իրավունքը: Նման իրավիճակն անընդունելի է և չի նպաստում պաշտոնատար անձանց կողմից իրավախախտումների հիման վրա քննչական գործողություններ իրականացնող մարմնի նկատմամբ հանրային վստահության ձևավորմանը, չի համապատասխանում հաշվետու և թափանցիկ կառավարման սկզբունքին, ինչը մտահոգիչ է գոյություն ունեցող հանրային վստահության ցածր մակարդակի առկայության պայմաններում:*

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

2020 թ. առաջին կիսամյակում COVID-19 համավարակի կանխարգելման նպատակով մարտի 16-ին Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում արտակարգ դրություն հայտարարվեց, որը մի քանի անգամ երկարաձգվեց մինչև սեպտեմբերի 11-ը, իսկ սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը տևած պատերազմից հետո սկսվեցին լայնածավալ հավաքներ և հանրային այլ ակցիաներ իշխանափոխության պահանջով: Հիմք ընդունելով մշտադիտարկման թվային տվյալները, ինչպես նաև հրապարակումների բովանդակությունը՝ կարող ենք եզրակացնել, որ ոստիկանության ծառայողներն այդպես էլ չդրսևորեցին արտակարգ իրավիճակներում պատշաճ գործելու բավարար մասնագիտական պատրաստվածություն:

2020 թ. ընթացքում ԶԼՄ-ների հրապարակումների հիման վրա արձանագրվել է մարդու իրավունքների խախտման **192 դեպք**:

2019 թ. արձանագրվել է ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման ***90 դեպք****, 2018 թ.՝* ***181 դեպք****, 2017 թ.՝* ***107 դեպք****, 2016 թ.՝* ***338 դեպք****, 2015 թ.՝* ***304 դեպք*** *(տե՛ս գծապատկեր 2):* Ըստ այդմ, խախտումների թիվն աճել է 102-ով (53.1%-ով)՝ 2019 թ-ի համեմատությամբ, 11-ով (5.7%-ով)՝ 2018 թ.-ի համեմատությամբ, 85-ով (44.3%-ով)՝ 2017 թ.-ի համեմատությամբ, նվազել է 146 դեպքով (76%-ով) 2016 թ.-ի համեմատությամբ և 112 դեպքով (58.3%-ով) 2015 թ.-ի համեմատությամբ:

Գծապատկեր 2. Ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման ընդհանուր թիվը 2015- 2020 թթ.



Ինչպես երևում է գծապատկերից, 2020 թ. ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի կրկնակի աճ է գրանցվել նախորդ տարվա համեմատ: Ընդ որում, 2020 թ. առաջին կիսամյակում արձանագրվել է հանրային միջոցառումների ընթացքում և/կամ դրանց հետևանքով խախտման **30 դեպք**, երկրորդ կիսամյակում՝ **81 դեպք**, այսինքն միջոցառումների ընթացքում և/կամ դրանց հետևանքով խախտման ընդհանուր դեպքերի **73%-ը**: Անհատական բնույթի դեպքերի պարագայում գրանցվել է հակադիր պատկերը: 81 դեպքից **49-ը, այն է՝ 60.5%-ն** արձանագրվել է առաջին կիսամյակում, իսկ **32-ը (39.5%-ը)**՝ երկրորդ կիսամյակում (տե՛ս *գծապատկեր 3*):

Նման պատկերը կարող է պայմանավորված լինել նրանով, որ մի կողմից՝ համավարակի պայմաններում ոստիկանությանն էր վերապահված մասնավորապես ազատ տեղաշարժի սահմանափակումները և անհատական պաշտպանության միջոցներ կրելու պահանջը վերահսկելու գործառույթը: Նրանք, ունենալով իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու իրավական գործիքակազմ, այնուամենայնիվ դիմում էին ոչ իրավաչափ գործողությունների՝ բռնության, քաղաքացիական հագուստով անձանց ծառայություններին, դրսևորում էին ընտրողական մոտեցում՝ անտեսելով ակնհայտ իրավախախտումները: Մյուս կողմից՝ երկրորդ կիսամյակում՝ հատկապես հետպատերազմյան ժամանակահատվածում, լայն թափ ստացան հակաիշխանական ակցիաները, որոնց ժամանակ ոստիկանության ծառայողների գործողություններն անկանխատեսելի և ոչ միատեսակ էին, ուղեկցվում էին ուժի կիրառմամբ, անձանց հետապնդմամբ, քաղաքացիական հագուստով, իսկ երբեմն նույնսիկ դիմակավորված անձանց ներգրավմամբ:

Գծապատկեր 3. Մարդու իրավունքների խախտման դեպքերը՝ ըստ 2020 թ. կիսամյակների



Այսպիսով, 2020 թ. արձանագրվել է հավաքների ժամանակ կամ հավաքներին մասնակցելու հետևանքով ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման 111 դեպք: *2019 թ.-ի ցուցանիշի համեմատ այս ցուցանիշն աճել է 62-ով (55.9%-ով), 2018 թ.-ի համեմատությամբ նվազել է 23-ով (20.7%-ով), 2017 թ.-ի ցուցանիշի համեմատ (37 դեպք) աճել է 74 դեպքով (66.7%-ով), 2016 թ.-ի ցուցանիշի համեմատ (163 դեպք) նվազել է 52-ով (46.8%-ով), իսկ 2015 թ.-ի ցուցանիշի համեմատ (201 դեպք)՝ 90-ով (81%-ով) (տե՛ս գծապատկեր 3):*

2020 թ. արձանագրվել է 81 անհատական բնույթի դեպք*: 2019 թ. համեմատ այդ ցուցանիշն աճել է 40-ով (49.4%-ով), 2018 թ.-ի համեմատ (47 դեպք)՝ 34 դեպքով (42%-ով), 2017 թ.-ի նույն ցուցանիշի համեմատ (70 դեպք)՝ 11 դեպքով (13.6%-ով), 2016 թ.-ի ցուցանիշի համեմատ (168 դեպք) դեպքերի թիվը նվազել է 87-ով (51,8%-ով), իսկ 2015 թ.-ի նույն ցուցանիշի համեմատ (103 դեպք)՝ 22-ով (21.4%-ով) (տե՛ս գծապատկեր 4):*

Գծապատկեր 4. Ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման անհատական դեպքերի և հավաքների կամ հավաքներին մասնակցելու արդյունքում արձանագրված իրավունքների խախտման դեպքերի թիվը 2015-2020 թթ.



2020 թվականի ընթացքում խախտվել է մարդու հետևյալ 16 իրավունքները՝

1. ազատ տեղաշարժվելու իրավունք
2. անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք
3. անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք
4. առողջության իրավունք
5. արդար դատաքննության իրավունք
6. բնակարանի անձեռնմխելիության իրավունք
7. գույքի անձեռնմխելիության իրավունք
8. իրավաբանական օգնություն ստանալու իրավունք
9. իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք
10. լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք
11. խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք
12. խոսքի ազատության իրավունք
13. խտրականությունից զերծ մնալու իրավունք
14. սեփականության իրավունք
15. տեղեկատվության ազատության իրավունք
16. ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք *(տե՛ս գծապատկեր 5)*:

Գծապատկեր 5. 2020 թվականին խախտված իրավունքները



Առավել մեծ թվով խախտվել է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը (111 դեպք)՝ կազմելով ընդհանուր խախտման դեպքերի կեսից ավելին՝ 57,8%։ Արձանագրվել է այս իրավունքի խախտման 81 դեպք հավաքների ընթացքում և 30 անհատական բնույթի դեպք։ Նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշն աճել է 60,4%-ով (44 դեպք 2019 թ.-ին)։ Ընդ որում հավաքների ընթացքում անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտման դեպքերի աճը կազմել է 70,4%-ով (24 դեպք հավաքների ընթացքում 2019 թ.-ին)։ 2019 թ. արձանագրվել էր 20 անհատական բնույթի դեպք։

2018 թ.-ին անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը խախտվել էր 76 դեպքում (դեպքերի 42%)։ 2017 թ.-ին գրանցվել է այդ իրավունքի խախտման 16 դեպք (դեպքերի 15%-ը)։ 2016 թ.-ին անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը խախտվել էր 157 դեպքում (ընդհանուր դեպքերի 46.4%-ը), իսկ 2015 թ.-ին՝ 70 դեպքում (ընդհանուր դեպքերի 23%-ը)։

Երկրորդ առավել մեծ թվով խախտված իրավունքը խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքն էր։ 2020 թ. ընթացքում արձանագրվել է խախտման 101 դեպք՝ կազմելով ընդհանուր խախտման դեպքերի 52.6%-ը։ 2019 թ.-ի համեմատ այս ցուցանիշն աճել է 71.3%-ով (29 դեպք)։

2018 թ.-ին խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը խախտվել է 81 դեպքում (դեպքերի 44.8%)։ Ընդ որում, 73 դեպքն արձանագրվել է 2018 թվականի ապրիլի 7-25-ն ընկած ժամանակահատվածում։ 2017 թվականին այդ իրավունքը խախտվել էր 17 դեպքում (դեպքերի 44.8%), 2016 թվականին՝ 121 դեպքում (դեպքերի 35.8%), իսկ 2015 թվականին՝ 96 դեպքում (դեպքերի 31.6%)։

Առավել հաճախ խախտվել է նաև ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը՝ 84 դեպք (դեպքերի 43,8%)։ Այս իրավունքի խախտման դեպքերից 52-ն արձանագրվել են հավաքների ընթացքում, 32-ը՝ անհատական բնույթի դեպքեր են։ 2019 թ.-ի համեմատ գրանցվել է դեպքերի ավելի քան 50% աճ (41 դեպք 2019 թ.)։ Նշենք, որ հավաքների ընթացքում խախտման դեպքերը նախորդ տարվա համեմատ աճել են 57.7%-ով (22 դեպք)։ 2019 թ.-ին անհատական բնույթի դեպքերը 19-ն էին։

2018 թ.-ին ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը խախտվել էր 84 դեպքում՝ կազմելով ընդհանուր խախտման դեպքերի 46.4%-ը, 2017 թ.-ին՝62 դեպքում՝կազմելով 49.1%-ը։ 2016 թ.-ին ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը խախտվել էր 141 դեպքում (ընդհանուր դեպքերի 41.7%-ը), իսկ 2015 թ.-ին՝37 դեպքում (ընդհանուր դեպքերի 12.2%-ը)։

Կարող ենք փաստել, որ առավել հաճախ խախտվող իրավունքների շարքում առաջատարները շարունակում են մնալ անձնական ազատության և անձեռնմխելիության, խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու և ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքները։ 2019 թ. համեմատ շեշտակի աճել են նաև անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու (10 դեպք՝ 2019 թ., 27 դեպք՝ 2020 թ.) արդար դատաքննության (3 դեպք՝ 2019 թ., 25 դեպք՝ 2020 թ.), լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքների խախտման դեպքերը։ Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքը նախորդ տարվա համեմատ աճել է 12-ով՝ 2 դեպք 2019 թ.-ին, և 14 դեպք՝ 2020 թ.-ին։

2020 թ. մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 57 դեպքում (29.7%) խախտվել է 1 իրավունք, **68** դեպքում (35.4%)՝ միաժամանակ 2 իրավունք, **53** դեպքում (27.6%)՝ միաժամանակ 3 իրավունք, **12** դեպքում (6.3%) ՝ միաժամանակ 4 իրավունք, **2** դեպքում՝ 5 իրավունք։

Աղյուսակ 1. 2015-2019 թթ. ընթացքում խախտված իրավունքները՝ ըստ միաժամանակյա խախտված իրավունքների թվի:

տարեթիվ դեպքերի թիվ	**2015 թ. 304 դեպք**		**2016 թ. 338 դեպք**		**2017 թ. 107 դեպք**		**2018 թ. 181 դեպք**		**2019 թ. 90 դեպք**	
	թիվ	*տոկոս*	թիվ	*տոկոս*	թիվ	*տոկոս*	թիվ	*տոկոս*	թիվ	*տոկոս*
1 իրավունք	294	*96.7*	132	*39.0*	55	*51.4*	62	*34.3*	**41**	*45.6*
2 իրավունք	10	*3.3*	109	*32.3*	42	*39.3*	88	*48.6*	**34**	*37.8*
3 իրավունք			74	*21.9*	9	*8.4*	27	*14.9*	**14**	*15.5*
4 իրավունք			13	*3.8*	1	0.9	4	*2.2*	**0**	*0*
5 իրավունք			9	*2.7*	0	0	0	*0*	**1**	*1.1*
6 իրավունք			1	*0.3*	0	0	0	*0*	**0**	*0*

Համեմատելով մեկից ավելի իրավունքների խախտման վերաբերյալ տվյալները՝ կարող ենք փաստել, որ հետհաղափոխան երկրորդ տարում կտրուկ աճել են 2 և ավելի իրավունքների միաժամանակյա խախտման դեպքերը:

Դեպքերի գերակշիռ մասը, ավանդաբար, գրանցվել է Երևանում (152 դեպք, ընդհանուր խախտումների 79.2%-ը):